Պարույր Սևակ

Երգող նյութը

Եվ ի՞նչ ես դու:
Զարմանալի՜ երևույթ ես...
Երբ չես երգում՝
Եթե անգամ
Մարմարակերտ սյուն ու մույթ ես՝
Ուսիդ չկա
Կամա՛ր, ճակա՛տ.
Փլատակված սարավույթ ես:
Զարմանալի՜ երևույթ ես:
Երբ չես երգում՝
Լոկ շնչելու,
Կամ մնջելու,
Լոկ տանջվելու,
Կամ տանջելու,
Սովորական սովորույթ ես:
Հե՛նց երգեցիր՝
Նույնն ես կարծես,
Բայցևայնպես տեղն ու տեղը
Մի՛շտ նորույթ ես:
Երբ չես երգում՝
Ոտեր առած մի ձանձրույթ ես,

Միս-ոսկորի քայլող կույտ ես,
Եվ ո՛չ խեժ ես,
Ո՛չ ավիշ ես.
Քո իսկ հոգուն կպած ձյութ ես:
Հե՛նց երգեցիր՝
Դու ուրի՛շ ես.
Միանգամից գեղեցկացած,
Ո՛չ թե մարդ ես,
Այլ կախա՛րդ ես,
Մո՛գ ես,
Դյո՛ւթ ես:
Հենց երգեցիր՝
Ասեն-չասեն,
Ուզեն-չուզեն՝
Թո՛ղ որ փոքրը,
Բայցևայնպես դարձյալ գյուտ ես...
Դու պարզապես... երգող նյութ ես,
Երգող նյութ ես...

24.IV.1959թ.
Մոսկվա